500 ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից դեպի Արցախ՝ Շուշիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի կազմակերպված ուխտագնացության շուրջ հինգ հարյուր մասնակիցների:

Ուխտագնացությունը նախաձեռնել են Համահայկական միջազգային երիտասարդական կենտրոնը և «Հոգևոր-մշակութային վերածնունդ» հիմնադրամը՝ համախմբելով ՀՀ երիտասարդական միությունները և ուսանողական խմբերը: Ուխտագնացությանը մասնակցում են ուսանողներ, մտավորականներ, ազատամարտիկներ, հասարակական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Համատեղ աղոթքից հետո ուխտավորներին Հայրապետական իր օրհնությունն ու պատգամն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ ուխտավորները Տիրոջ Համբարձման տոնին Սուրբ Էջմիածնից են սկսում ուխտագնացությունը՝ իրենց առաջին աղոթքն առ Աստված ուղղելով Իջման Սուրբ Սեղանի առջև, որտեղ Աստված խոսեց, հայտնվեց հայ ժողովրդին: Հայոց Հայրապետն անդրադարձավ Համբարձման տոնի խորհրդին և ուխտագնացության նշանակությանը իբրև հոգևոր ճամփորդություն՝ հորդորելով ուխտավորներին իրենց ուղեկից դարձնել աղոթքը և Տիրոջ մեծագույն՝ միմյանց սիրելու պատվիրանը:

«Այսօր, երբ դուք ուխտավոր եք, մեր պատգամն է, որ Տիրոջ պատվիրանը կրեք ձեր հոգիներից ներս, վերցնեք ձեզ հետ: Միրով է, որ մենք պիտի կարողանանք մեր երկիրը շենացնել, մեր առջև ծառացած բոլոր դժվարությունները հաղթահարել և մեր կյանքը երջանիկ դարձնել, մեր երկիրը՝ հզոր, շեն ու բարեբեր՝ մեր ժողովրդի համար, և արժանանալ մեր նախնիների, մեր հայրերի սուրբ օրհնության»,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը կոչեց ուխտավորներին ուխտագնացությունը գեղեցիկ առիթ դարձնել՝ Աստծո հետ հաղորդակցվելով բացահայտելու իրենց ինքնությունը, ճանաչելու Հայրենիքը, զորանալու սիրո մեջ առ Աստված և առ Հայրենին:

Հանդիպումն ավարտվեց «Պահպանիչ» աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ